



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Ֆինանսական դիտարկումների կենտրոն + 374 10 54 50 88, 23 01

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 27.07.2012թ. ԹԻՎ 1/760 Ա ՈՐՈՇՄԱՄԲ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 12

ԿԱՆԽԱՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄԸ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԵՐԵՎԱՆ 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1. Կիրառելիության շրջանակը	3
Գլուխ 2. Ընդհանուր դրույթներ.....	3
Գլուխ 3. Փողերի լվացման հնարավոր սխեմաների նկարագրությունը.....	5
Ա) Կանխավճարային քարտերը որպես այլընտրանքային փոխանցումների գործիք օգտագործելու միջոցով փողերի լվացման սխեմա.....	5
Ա.1) Անդրսահմանային փոխանցումներ	5
Ա.2) Ներպետական փոխանցումներ	6
Բ) Կանխավճարային քարտերը որպես տարանցիկ հաշիվ օգտագործելու միջոցով փողերի լվացման սխեմա	7
Գ) Կանխավճարային քարտերի անդրսահմանային ֆիզիկական փոխադրման միջոցով փողերի լվացման սխեմա	8
Գլուխ 4. Եզրակացություններ.....	9

Գլուխ 1. Կիրառելիության շրջանակը

1. Սույն տիպաբանությամբ ներկայացվող գործիքների և գործարքների/գործառնությունների տեսակների կիրառությամբ փողերի լվացման սխեմաները կարող են վերաբերել հաշվետվություն տրամադրող անձ հանդիսացող բանկերին:

2. Բացի բանկերից, սույն տիպաբանությամբ նկարագրվող սխեմաները ճանաչողական տեսանկյունից կարող են հետաքրքրություն ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող վճարահաշվարկային կազմակերպությունների, մասնավորապես՝ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող ընկերությունների, վճարահաշվարկային համակարգի օպերատորների համար, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով կանխավճարային քարտերի բիզնեսում միջնորդական գործունեություն իրականացնող անձանց համար:

Գլուխ 2. Ընդհանուր դրույթներ

3. Կանխավճարային քարտը վճարային քարտի տարատեսակ է, որը նախատեսված է ոչ մեծ գումարներով, հիմնականում սպառողական ապրանքների գնումներ կատարելու և ծառայություններից օգտվելու համար: Ըստ այդմ, կանխավճարային քարտերի ձեռքբերման ու օգտագործման ընթացակարգը այլ վճարային քարտերի համեմատ ավելի պարզեցված է: Վճարային քարտերի այլընտրանք հանդիսացող ավելի պարզ ու հարմարավետ գործիքի՝ կանխավճարային քարտի նկատմամբ պահանջնարկի զգալի աճը հանգեցրել է նրան, որ կանխավճարային քարտերի բիզնեսը ժամանակի ընթացքում սկսել է ներառել վճարային քարտերի գրեթե բոլոր ֆունկցիոնալ հատկանիշներ:

4. Ներկայումս շուկան առաջարկում է կանխավճարային քարտերի լայն տեսականի՝ սկսած ամենապարզից (օրինակ՝ նվեր քարտեր, որոնք կարող են օգտագործվել առևտրային կետերի սահմանափակ ցանցի շրջանակներում, չեն վերալիցքավորվում և բանկոմատներում չեն սպասարկվում) մինչև ավելի բազմաֆունկցիոնալ քարտերը (օրինակ, քարտը կարող է լիցքավորվել և/ կամ վերալիցքավորվել կանխիկով, էլեկտրոնային վճարման գործիքով կամ բանկային հաշվով, քարտին առկա գումարը կարող է բանկոմատով կանխիկացվել, փոխանցվել այլ քարտի կամ բանկային հաշվի, քարտը կարող է օգտագործվել տարատեսակ ապրանքներ ու ծառայություններ ձեռք բերելու համար):

5. Կանխավճարային քարտերի համար բնութագրական են մի շարք հատկանիշներ: Մասնավորապես, այդ քարտերը.

- 1) հնարավոր է ձեռք բերել և օգտագործել առանց բանկային հաշիվ ունենալու (համապատասխան պայմանագիր կնքելու),
- 2) ձեռք բերելիս հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն (նույնականացում և ինքնության ստուգում) չի իրականացվում կամ իրականացվում է խիստ սահմանափակ ընթացակարգով,
- 3) օգտագործվում են անանուն ռեժիմով՝ քարտի պարտադիր վավերապայմանները չեն ներառում քարտապանին նույնականացնող տվյալները և ստորագրությունը:

6. Թեպետ կանխավճարային քարտերը նախատեսված են հիմնականում սահմանափակ տեսակների գործառնություններ կատարելու համար, ներկայումս դրանց որոշ տարատեսակների կիրառության շրջանակն ընդլայնվել է: Այսպես.

- 1) որոշ կանխավճարային քարտերով հնարավոր է կատարել բանկումատով կանխիկացում,
- 2) միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից սպասարկվող կանխավճարային քարտերը գործածելի են նաև թողարկողի երկրից դուրս՝ համակարգի անդամ երկրներում,
- 3) որոշ կանխավճարային քարտեր կարող են օգտագործվել հաճախորդի կամ երրորդ անձի բանկային կամ վիրտուալ հաշիվները համալրելու համար,
- 4) որոշ կանխավճարային քարտեր տալիս են կանխիկով կամ անկանխիկ համալրման (վերալիցքավորման) հնարավորություն:

7. Կանխավճարային քարտերի ձեռքբերման և օգտագործման պարզեցված ընթացակարգը, ինչպես նաև դրանց լայն տարածումն այդ քարտերը դարձնում են փողերի լվացման տեսանկյունից բավական հարմար գործիք: Այդ քարտերի՝ վերը թվարկված հատկանիշների չարաշահմամբ իրագործվող փողերի լվացման սխեմաների թվին են պատկանում հետևյալները.

- 1) կանխավճարային քարտերը որպես այլընտրանքային փոխանցումների գործիք օգտագործելու միջոցով փողերի լվացման սխեմա,
- 2) կանխավճարային քարտերը որպես տարանցիկ հաշիվ օգտագործելու միջոցով փողերի լվացման սխեմա,
- 3) կանխավճարային քարտերի անդրսահմանային ֆիզիկական փոխադրման միջոցով փողերի լվացման սխեմա:

Գլուխ 3. Փողերի լվացման հնարավոր սխեմաների նկարագրությունը


Ա) Կանխավճարային քարտերը որպես այլընտրանքային փոխանցումների գործիք օգտագործելու միջոցով փողերի լվացման սխեմա

8. Այս կարգի սխեմաներում հանցավոր մտադրություն ունեցող անձինք, օգտվելով կանխավճարային քարտերի ձեռքբերման և համալրման (վերալիցքավորման) ընթացքում պատշաճ ուսումնասիրության պահանջների բացակայության կամ թույլ լինելու հանգամանքից, օգտագործում են դրանք՝ որպես անանուն փոխանցումներ կատարելու այլընտրանքային եղանակ:

Ա.1) Անդրսահմանային փոխանցումներ

9. Ա անձը ցանկանում է որոշակի ապրանքների և/կամ ծառայությունների (հաճախ՝ այնպիսի ապրանքների և/կամ ծառայությունների, որոնց շրջանառությունն օրենքով արգելված կամ սահմանափակ/ կարգավորվող բնույթ է կրում) դիմաց արտասահման վճարումներ կատարել այնպիսի եղանակով, որը թույլ կտա բանկից կամ պետական մարմիններից ինչ-ինչ պատճառներով թաքցնել նշված ձեռքբերման փաստը: Այս նպատակով Ա-ն ուղղակիորեն թողարկողից կամ կանխավճարային քարտերի վաճառքով զբաղվող միջնորդից տարբեր հիմնավորումներով ձեռք է բերում բազմաթիվ կանխավճարային քարտեր: Այնուհետև, Ա-ն ձեռք բերված քարտերի նույնականացուցիչ տվյալներով բացում է վիրտուալ հաշիվներ և դրանցում առկա գումարները փոխանցում ձեռք բերվող ապրանքների և/կամ ծառայությունների մատակարարներին:


10. Մեկ այլ դեպքում, եթե կանխավճարային քարտերը սպասարկվում են միջազգային վճարահաշվարկային համակարգերի (օրինակ՝ VISA, MasterCard և այլն) կողմից, Ա-ն կարող է փոխանցվող գումարների շահառուներին հայտնել ձեռք բերված քարտերի նույնականացուցիչ տվյալները, որին հաջորդող՝ գումարների փոխակերպումը էլեկտրոնային փողի և դրանց տնօրինումը կարող է կատարվել հենց շահառուների կողմից: Միջոցների փոխանցումը հետագայում կարող է պարբերաբար կրկնվել քարտերի վերալիցքավորման միջոցով: Կանխավճարային քարտերի առավելությունն այս առումով այն է, որ դրանք թողարկվում են առանց հաշվի պայմանագրի, և դրանց օգտագործումը որևէ կերպ չի արտացոլվում անվանական հաշվի շրջանառության մեջ:



Ա.2) Ներպետական փոխանցումներ

11. Ա-ն, որ զբաղվում է ապրանքների մեծածախ վաճառքով, ցանկանում է թաքցնել մանրածախ վաճառողներից (Բ, Գ, Դ) ստացվող գումարները՝ այդպիսով խուսափելով որոշակի հարկային պարտավորությունների կատարումից: Այս նպատակով, մանրածախ վաճառողները Ա-ի ցուցումով բանկերից ստանում են կանխավճարային քարտեր, որոնք ֆիզիկապես փոխանցվում են Ա-ին: Հետագայում մանրածախ վաճառողները, վաճառքից առաջացած միջոցները որոշակի պարբերականությամբ բանկային հաշիվներին մուտքագրելու և փոխանցելու փոխարեն, պարզապես վերալիցքավորում են Ա-ի փաստացի տիրապետման ներքո գտնվող կանխավճարային քարտերը, իսկ վերջինս իր հերթին տնօրինում է այդ միջոցները՝ կանխիկացնելու կամ գնումներ կատարելու միջոցով:

12. Վերը նկարագրված սխեման կարող է օգտագործվել տարատեսակ հանցավոր նպատակներով, ինչպիսիք են, օրինակ, հարկային պարտավորություններից խուսափելը, թմրամիջոցների վաճառքից առաջացած եկամուտները մանր թմրադիլերներից մատակարարներին փոխանցելը և այլն:




Բ) Կանխավճարային քարտերը որպես տարանցիկ հաշիվ օգտագործելու միջոցով փողերի լվացման սխեմա

13. Այս սխեմայում հանցավոր մտադրություն ունեցող անձանց կողմից օգտագործվում է կանխավճարային քարտերով առանց առերես շփման անանուն գործարքներ կատարելու հնարավորությունը, ինչը թույլ է տալիս ապօրինի ճանապարհով ձեռք բերված (հափշտակված) միջոցները տեղաբաշխել այնպես, որ տեսանելի չլինեն դրանց իրական շահառուները (վերջնական ստացողները):

14. Այսպես, Ա-ն, ով ապօրինի ճանապարհով ձեռք է բերել բանկի հաճախորդների բանկային հաշիվների/ քարտերի մասին տվյալներ, այդ հաշիվներից համալրում (վերալիցքավորում) է իր կանխավճարային քարտերը: Այնուհետև Ա-ն կանխավճարային քարտերով կատարում է կանխիկացումներ և / կամ գնումներ: Ընդ որում, եթե այս սխեմայում ապօրինի ճանապարհով ձեռք բերված միջոցներն ուղղվում են սահմանափակ կիրառելիությամբ կանխավճարային քարտերի (օրինակ՝ նվեր քարտեր, որոնք նախատեսված են միայն սահմանափակ քանակությամբ խանութներից գնումների համար) ձեռքբերմանը, հանցավոր մտադրություն ունեցող անձը կարող է դրանց օգտագործմամբ առևտուր կատարելուց հետո ապրանքները փոխարկել կանխիկի՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով.


- 1) խանութից գնված ապրանքները վերավաճառելով,
- 2) ապրանքները խանութին հետ վերադարձնելով և փոխարենը կանխիկ պահանջելով:



Գ) Կանխավճարային քարտերի անդրսահմանային ֆիզիկական փոխադրման միջոցով փողերի լվացման սխեմա

15. Այս սխեմայում հանցավոր մտադրություն ունեցող անձանց կողմից օգտագործվում է կանխավճարային քարտերի՝ մի երկրից մյուս երկիր ֆիզիկական փոխադրման սահմանափակման բացակայությունը՝ ապօրինի ճանապարհով ձեռք բերված միջոցները կանխավճարային քարտերի փոխարկման և մեկ այլ երկրում դրանց օգտագործման նպատակով:

16. Այսպես, Ա երկրում գործող հանցավոր խումբը, իր գործունեությունից ստացված հանցավոր միջոցները օրինականացնելու նպատակով, ուղղակիորեն թողարկողից կամ կանխավճարային քարտերի վաճառքով զբաղվող միջնորդից կանխիկով գնում է բազմաթիվ կանխավճարային քարտեր: Այնուհետև գնված քարտերը, ֆիզիկապես տեղափոխվում են Բ երկիր, որտեղ դրանց հասանելի մնացորդը օգտագործվում է կանխիկացումների և/կամ (առցանց) գնումների միջոցով:



Գլուխ 4. Եզրակացություններ

17. Ներկայացված սխեմաներով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ պարունակում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

18. Փողերի լվացման հնարավոր սխեմաների առկայության վերաբերյալ եզրահանգման գալու նպատակով, բանկերը և այլ շահագրգիռ անձինք պետք է ուշադրություն դարձնեն այդ սխեմաների հայտնաբերման տեսանկյունից էական համարվող այնպիսի բնութագրական հատկանիշների, ինչպիսիք են.

- 1) հաճախորդի կողմից տրամադրված և ընթացիկ պատշաճ ուսումնասիրության ընթացքում հաշվետու անձի կողմից բացահայտված տվյալների միջև հակասությունները.
- 2) հաճախորդի կողմից արտասովոր մեծ քանակությամբ կանխավճարային քարտերի (միևնույն կազմակերպության թողարկած) ձեռքբերումը և համալրումը (վերալիցքավորումը).
- 3) հաճախորդի կողմից արտարժութային կանխավճարային քարտերի ձեռքբերումն այն դեպքում, երբ հայտարարված հետագա օգտագործման տեսանկյունից դա նպատակահարմար չէ.
- 4) կանխավճարային քարտի համալրումը (վերալիցքավորումը) բազմապիսի աղբյուրներից (օրինակ՝ բանկային փոխանցումներ, պլաստիկ քարտեր, կանխիկ) և բազմաթիվ անձանց կողմից.
- 5) կանխավճարային քարտի համալրումը (վերալիցքավորումը)՝ կարճ ժամանակահատվածում հաշվետվականության (նույնականացման) շեմը չգերազանցող բազմակի մուտքերի միջոցով (տրոհված համալրում).
- 6) կանխավճարային քարտի համալրումը (վերալիցքավորումը), որին կարճ ժամանակ անց հաջորդում է բանկոմատից կանխիկացումը (երբեմն՝ քարտի թողարկման երկրից դուրս տարբեր երկրներում գտնվող բանկոմատներից կատարված բազմակի կանխիկացումների միջոցով).
- 7) կանխավճարային քարտի օգտագործումը միայն կանխիկացումների համար՝ ի հակադրություն ՊՈՍ-տերմինալների միջոցով կամ վիրտուալ տիրույթում գնումներ կատարելու միջոցով օգտագործման.
- 8) կանխավճարային քարտի ոչ տիպական գործածությունը (այդ թվում՝ հաճախակի անդրսահմանային գործարքները):